ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

10 նոյեմբերի 2026թ. թիվ 1282

Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՄԵԴՈՎԿԱ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի 2026 թվականի նոյեմբերի 10-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի աշխատակից՝ մարզում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրող Արման Մկրտչյանին ս/թ նոյեմբերի 10-ին մեկ օրով գործուղել Տաշիր համայնքի Մեղովկա բնակավայր՝ շինարարական աշխատանքները դիտարկելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Արտավազդ Բեջանյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

11/10/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493 Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր